ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՓՈԽԱԴԱՐՁ ՄԱՏԱԿԱՐԱՐՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՆՈՐՄԵՐԻ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները ի դեմս կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր,

նշելով աշխատանքի պաշտպանության հիմնախնդիրների միջպետական բնույթը եւ փոխադարձաբար մատակարարվող մեքենաների, մեխանիզմների, սարքավորումների, նյութերի, տեխնոլոգիաների, աշխատանքի պաշտպանության միջոցների (այսուհետ՝ փոխադարձաբար մատակարարվող արտադրանք) մշակման, արտադրության, շահագործման եւ օգտագործման դեպքում աշխատողների կյանքի անվտանգության եւ առողջության, սոցիալական երաշխիքների ապահովման համար նրանց լուծման կարեւորությունը,

աշխատանքի պաշտպանության բնագավառում համագործակցության մասին 1994 թվականի դեկտեմբերի 9-ի Համաձայնագրի իրականացման նպատակով, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը, օժտված արտադրության կազմակերպման գործում լրիվ ինքնուրույնությամբ, սահմանում են մշակման կարգ եւ ապահովում են աշխատանքի պաշտպանության համաձայնեցված նորմերի եւ պահանջների պահպանումը (այսուհետ՝ աշխատանքի պաշտպանության նորմեր եւ պահանջներ) փոխադարձաբար մատակարարվող արտադրանքի մշակման, արտադրության, շահագործման եւ օգտագործման դեպքում:

ՀՈԴՎԱԾ 2

Աշխատանքի պաշտպանության նորմերը եւ պահանջները պարունակվում են հետեւյալ նորմատիվ իրավական ակտերում.

միջպետական չափանիշներում, ներառյալ աշխատանքի անվտանգության չափանիշների Համակարգի չափանիշները (ԱԱՉՀ),

անվտանգության կանոններում, սանիտարական կանոններում, նորմերում եւ հիգիենիկ նորմատիվներում, որպես միջպետական ընդունված այլ նորմատիվ իրավական փաստաթղթերում,

ազգային չափանիշներում եւ արտադրանքի համար տեխնիկական պայմաններում, որոնց կիրառումը արտադրանքի մշակման, արտադրության համար դրվածքի եւ թողարկման դեպքում վերապահված է հատուկ համաձայնագրերով (պայմանագրերով):

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը պարտավորվում են ապահովել փոխադարձաբար մատակարարվող արտադրանքը համապատասխանության հավաստագրով կամ այլ փաստաթղթերով եւ փոխադարձաբար ճանաչում են լիազոր մարմինների կողմից տրված հավաստագրերը եւ փոխադարձաբար մատակարարվող արտադրանքի համար համապատասխանության նշանները, թույլտվությունները, որոնք հաստատում են նրա համապատասխանությունը աշխատանքի պաշտպանության նորմերին եւ պահանջներին: Համապատասխանության հավաստագրերի, թույլտվությունների չհիմնավորված կամ ոչ օրինաչափական տրման պատասխանատվությունը կրում է այն մարմինը, որը տվել է սկզբնական հավաստագիրը, թույլտվությունը իր պետության գործող օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 4

Աշխատանքի պաշտպանության նորմերի եւ պահանջների մշակման դեպքում, կախված փոխադարձաբար մատակարարվող արտադրանքի տեսակից, բանական բավականաչափության

սկզբունքի հիման վրա, ապահովվում են կառուցվածքների անվտանգության, վտանգավոր եւ վնասակար արտադրական գործոնների սահմանային թույլատրելի մակարդակների (խտությունների) պահպանման պահանջները:

ՀՈԴՎԱԾ 5

Որպես միջպետական կիրառվող աշխատանքի պաշտպանության նորմերի եւ պահանջների համաձայնեցումը, ինչպես նաեւ դրանց վերանայման եւ նորերի մշակման անհրաժեշտության մասին որոշումների ընդունումը, իրականացվում է փորձագետների աշխատանքային խմբերի կողմից, որոնք ստեղծվում են հետեւյալ միջկառավարական համաձայնագրերին համապատասխան՝

1992թ. մարտի 13-ի ստանդարտացման, չափաբանության եւ սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականության անցկացման մասին,

1994թ. դեկտեմբերի 9-ի աշխատանքի պաշտպանության բնագավառում համագործակցության մասին:

ՀՈԴՎԱԾ 6

Աշխատանքի պաշտպանության միջպետական հանդիսացող նորմերի եւ պահանջների օգտագործման մասին որոշումների ընդունումը իրականացվում է.

ստանդարտացման, չափաբանության եւ սերտիֆիկացման Միջպետական խորհրդի կողմից՝ չափանիշներով (բացառությամբ շինարարության բնագավառի չափանիշների),

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների աշխատանքի, միգրացիայի եւ բնակչության սոցիալական պաշտպանության Խորհրդակցական խորհրդի կողմից՝ աշխատանքի պաշտպանության, անվտանգության կանոններով եւ աշխատանքի պաշտպանության այլ նորմատիվ իրավական փաստաթղթերով,

ստանդարտացման եւ շինարարությունում տեխնիկական նորմավորման Միջպետական գիտատեխնիկական հանձնաժողովի կողմից՝ շինարարական նորմերով եւ կանոններով,

Անկախ Պետությունների Համագործակցության առողջապահության բնագավառում համագործակցության Խորհրդի կողմից՝ սանիտարական կանոններով, նորմերով եւ հիգիենիկ նորմատիվներով:

Կողմերը ապահովում են աշխատանքի պաշտպանության նորմերի եւ պահանջների հաստատումը եւ պահպանումը, ազգային օրենսդրությամբ նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերը ապահովում են աշխատանքի պաշտպանության նորմերի եւ պահանջների պահպանումը փոխադարձաբար մատակարարվող արտադրանքի հանդեպ նրա մշակման եւ արտադրության բոլոր փուլերում, ինչպես նաեւ շահագործման (տեխնիկական մատակարարման եւ վերանորոգման, փոխադրման, պահպանման) եւ օգտագործման, առանձին կամ համալիրների եւ տեխնոլոգիական համակարգերի կազմում օգտագործման դեպքում: Աշխատանքի պաշտպանության նորմերի եւ պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունը եւ վերահսկողությունը փոխադարձաբար մատակարարվող արտադրանքի հանդեպ իրականացվում է Կողմերի հսկողության եւ վերահսկողության պետական մարմինների, ստանդարտացման, չափաբանության եւ սերտիֆիկացման գծով գերատեսչությունների կողմից իրենց իրավասությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 8

Աշխատանքի պաշտպանության նորմերին եւ պահանջներին չհամապատասխանող արտադրանք պատրաստողները (մատակարարողները) կրում են պատասխանատվություն եւ փոխհատուցում են սպառողների վնասը, Կողմերի ազգային օրենսդրությանը եւ կնքված պայմանագրերին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագրի կատարման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են Կողմերի իրավասու մարմինների փոխադարձ խորհրդակցությունների միջոցով՝ սահմանված աշխատանքի պաշտպանության բնագավառում համագործակցության մասին 1994 թվականի դեկտեմբերի 9-ի Համաձայնագրին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 10

Կողմերը ապահովում են սույն Համաձայնագրի շրջանակներում կատարվող աշխատանքների եւ ձեռք բերված գիտատեխնիկական արդյունքների վերաբերյալ ստացվող փաստաթղթերի եւ տեղեկությունների գաղտնիությունը, եթե փոխանցող Կողմը նախապայման է դրել դրանց գաղտնիությունը:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագրում Կողմերը կարող են կատարել լրացումներ եւ փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են համապատասխան արձանագրություններով:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից: Այն մասնակից պետության համար, որն ուղարկել է ավանդապահին այդպիսի ընթացակարգերի կատարման մասին ծանուցումը ավելի ուշ, ապա այն ուժի մեջ կմտնի ավանդապահի կողմից տվյալ ծանուցման ստացման օրվանից:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագիրը բաց է նրա նպատակներն ու սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից միանալու համար:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Համաձայնագիրը կնքվում է 5 տարի ժամկետով եւ ինքնաբերաբար ամեն անգամ կերկարաձգվի մեկ տարով: Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալու օրվանից առնվազն վեց ամիս առաջ այդ մասին ծանուցելով ավանդապահին:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1996 թվականի ապրիլի 12-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը կուղարկի սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը նրա հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1999 թվականի մայիսի 17-ից: